Grant Thornton

Գրանթ Թորնթոն Ամիօ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961
www.gta.am

## Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱԳՐԱ ԼԻՋԻՆԳ» Վարկային Կազմակերպություն Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերին և Խորհրդին,

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԳՐԱ ԼԻՋԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները 2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար, որոնցից ստացվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները՝ Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2010թ. հունվարի 29 ամսաթվով թվագրված մեր հաշվետվությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որոնցից ստացվել է սույն հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը բոլոր էական առումներով համապատասխանում է ֆինանսական հաշվետվություններին, որոնցից այն ստացվել է:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական միջոցների հոսքերի, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը պետք է դիտարկել հակիրճ ֆինանսական տեղեկատվության ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արեն Աղաջանյան
Աուդիտոր

Գրանթ Թորնթոն Ամիօ ՍՊԸ
29 հունվարի, 2010թ.
ք. Երևան